

Արձանագրություն թիվ 2

Գավառի պետական համալսարանի 2018 թվականի հունվարի 31-ի ռեկտորատի նիստի

Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում
2. 2018թ. ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստման ընթացքը առկա ուսուցման ֆակուլտետներում
3. 2016-2017 ուսումնական տարվա ինքնավերլուծության արդյունքները՝ ըստ ԳՊՀ ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների
4. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ռեկտորատի 13 անդամներ:

1. **Լսեցին** - Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Զեկ.՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեցին ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով իրականացված աշխատանքները:

2. **Լսեցին** - 2018թ. ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստման ընթացքը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին իրականացվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ մանրամասներ:

3. **Լսեցին** - 2016-2017 ուսումնական տարվա ինքնավերլուծության արդյունքները՝ ըստ ԳՊՀ ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների:

/Զեկ.՝ ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ/

Քննարկվեցին ինքնավերլուծության ուղղությամբ իրականացվող աշխատանքների կատարման վերաբերյալ որոշ նկատառումներ:

4. **Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ և ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեցին ուսման վարձերի վճարման ընթացքը և հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

5. **Լսեցին** - Ընթացիկ հարցեր:

- 5.1 ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) լրամշակված ձևանմուշի մասին հարցը:

Քննարկվեցին կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) լրամշակված ձևանմուշի մասին որոշակի դիտարկումներ:

5.2 ԳՊՀ-ում մեկ ընտանիքից երկու և ավելի ուսանող ունեցողների հարցի մասին:

/Զեկ,՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուսուզյան/

Նշվեց, որ ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերում մեկ ընտանիքից երկու և ավելի ուսանող ունեցողներին բուհի միջոցների հաշվին պետք է խրախուսել:

Հանձնարարվեց ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններին՝ վերոնշվածի վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

Որոշեցին.

1. Դասացուցակների կազմման ավարտից հետո համապատասխան տեղեկատվությունը զետեղել ԳՊՀ համացանցային կայքում.
2. Ինքնավերլուծության զեկույցը քննարկել ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում.
3. Կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) լրամշակված ձևաթղթում ավելացնել «Կրթական ծրագրով» տեղեկատվության լրացման մասնահատվածը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Ն. Ա. Միրիբյան